

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Միջոցառումներ Հայաստանի Հանրապետությունում և առցանց

- ✓ 2020թ. հուլիսի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով կայացած հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 1-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը, Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և առևտրի և այլ ծառայությունների վիճակագրության բաժնի պետ Ա. Հարությունյանը մասնակցել են ՄԱԿ-ի Տնտեսական և սոցիալական հարցերի վարչության կողմից կազմակերպված «COVID-19 համավարակի դեմ պայքարի նորարարական լուծումների համար թվային կառավարության և տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործում – պատասխան միջոցառումներ Աֆրիկայում» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 1-2-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կազմակերպված հիմնական ազգային համակարգողների երրորդ վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 2-ին Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են Եվրոստատի կողմից կազմակերպված «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի Ազգային վիճակագրական համակարգի համակարգման գծով վիրտուալ խմբի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 6-ին ՀՀ ՎՊԽ անդամ - Արմատատի նախագահի տեղակալ Գ. Գևորգյանը, ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը մասնակցել են ՄԱԿ Կանայք և Եվրոստատի «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի կողմից

կազմակերպված ժամանակի օգտագործման հետազոտություն (TUS) ծրագրի մեկնարկային առցանց հանդիպմանը,

- ✓ 2020թ. հուլիսի 6-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժինը, «Ազգային վիճակագրական համակարգի ամրապնդման համար ազգային ռազմավարական ծրագրի իրականացում» ECASAT ծրագրի համակարգող Ս. Գևորգյանը մասնակցել են ECASAT ծրագրի փորձագետ Վիշնյա Օմերբեգովիչի հետ Skype-ով կայացած ECASAT ծրագրի «Մշակել մեթոդաբանություն և գործիքներ արտակարգ իրավիճակների և աղետների վիճակագրության վերաբերյալ, մշակել համապատասխան հաշվետվությունների համակարգ» բաղադրիչի շրջանակում քննարկմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 7-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Թոխաթյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ջ. Ավոյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի մասնագետ Ա. Մարտիրոսյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի մասնագետ Լ. Ավետիսյանը և աշխատուժի հետազոտության ծրագրի բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կազմակերպված Ազգային վիճակագրական համակարգում Գենդերային վիճակագրության և գենդերային վիճակագրության ուղղության միջոցառումների վերաբերյալ առցանց աշխատանքային հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 8-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի վիճակագրության բաժնի կողմից կազմակերպված «Վարչական տվյալների օգտագործումը COVID-19 պատասխանին տեղեկացնելու համար. Վարչական տվյալներ տնօրինողների և վիճակագրության գրասենյակների միջև համագործակցության մեծացման օրինակներ» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 8-9-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը, իրավաբանական բաժնի պետին փոխարինող Գ. Մուրադյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ

Կ. Կույումջյանը, տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի գլխավոր մասնագետ Ս. Շախգելդյանը, գյուղատնտեսության և պարենային ապահովության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Մ. Խաչատրյանը, բիզնես ռեգիստրի, ընտրանքի և դասակարգիչների բաժնի մասնագետ Ա. Շաբոյանը և տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի մասնագետ Ս. Կարապետյանը մասնակցել են «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի շրջանակում կազմակերպված «Հետազոտողների կողմից մուտք միկրոտվյալներին» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. հուլիսի 9-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի Ռ. Շաբոյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են Եվրոստատի կողմից կազմակերպված «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի Ազգային վիճակագրական համակարգի համակարգման գծով վիրտուալ խմբի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 10-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ազգային ջրային համագործակցություն» ՀԿ-ի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման 6-րդ նպատակի՝ Մաքուր ջուր և սանիտարական պայմաններ, տեղայնացումը Հայաստանում» ծրագրի մեկնարկային աշխատաժողովին,
- ✓ 2020թ. հուլիսի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը և Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված Փորձառության տվյալների ինտեգրման համայնքի աշխատանքային խմբի վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 15-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ – ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի, ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից և Բարձր մակարդակի քաղաքական ֆորումի հովանու ներքո կազմակերպված «2030թ. օրակարգի

արագացումը և իրավիճակի բարելավումը COVID-19-ի հետ կապված» խորագրով առցանց հատուկ միջոցառմանը,

- ✓ 2020թ. հուլիսի 15-ին Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման բաժնի պետ Ա. Քերոբյանը մասնակցել են Գործարարության աջակցության գրասենյակի կողմից կազմակերպված «Տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ոլորտը Հայաստանում» խորագրով առցանց պանելային քննարկմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 16-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են Եվրոստատի կողմից կազմակերպված «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի Ազգային վիճակագրական համակարգի համակարգման գծով վիրտուալ խմբի առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 20-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել է Միացյալ ազգերի համալսարանի (UNU) կողմից կազմակերպված Էլեկտրոնային թափոնների վիճակագրության վերաբերյալ Skype-ով կայացած ուսումնական սեմինարին,
- ✓ 2020թ. հուլիսի 22-ին Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը և նույն բաժնի մասնագետ Ա. Համբարձումյանը մասնակցել են Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից կազմակերպված Կուպերնիկուսի օժանդակությամբ՝ Սևծովյան ավազանի տարածքում բնապահպանական մոնիթորինգին նվիրված հրապարակային մեկնարկային առցանց միջոցառմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի պետ Ն. Մուշեղյանը մասնակցել են Եվրոստատի կողմից կազմակերպված «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP)

ծրագրի Ազգային վիճակագրական համակարգի համակարգման գծով վիրտուալ խմբի առցանց հանդիպմանը,

- ✓ 2020թ. հուլիսի 23-ին ՀՀ ՎՊԽ անդամ Վ. Դավթյանը մասնակցել է «Ժամանակակից վիճակագրություն DDI-CDI» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 27-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի կողմից կազմակերպված «Վիճակագրական օրենսդրության մոդերնիզացում» ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի աշխատանքային խմբի վեբեքս հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 28-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել է ՄԱԿ-ի Տվյալների համաշխարհային ֆորումի թիմի քարտուղարության կողմից կազմակերպված «Լրացնել վիճակագրական արտադրության արժեքը մեքենայական ուսուցման միջոցով» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 28-ին Արմստատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է «Հայաստանում Կայուն զարգացման 2030թ. օրակարգի միգրացիոն նպատակների հասնելու գործում առաջընթացի մշտադիտարկում» նախագծի վերաբերյալ Skype-ով կայացած հարցազրույցին Owl.re-ի անկախ հետազոտական և գնահատման ընկերության փորձագետ Շարոն Մաքլենադանի հետ,
- ✓ 2020թ. հուլիսի 29-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «Պաշտոնական վիճակագրության արժեքը» աշխատանքային խմբի Skype-ով կայացած հանդիպմանը,
- ✓ 2020թ. հուլիսի 29-ին Արմստատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի գլխավոր մասնագետ Կ. Եսայանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Հողի ծածկույթի փոփոխության քարտեզագրում՝ օգտագործելով հեռահաշվարկ և Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS)» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 3-ից հոկտեմբերի 15-ը Արմստատի ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիգյանը մասնակցում է Արժույթի

միջազգային հիմնադրամի կողմից կազմակերպված «Պետական ֆինանսների վիճակագրություն» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. օգոստոսի 3-ից սեպտեմբերի 2-ը Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը և նույն վարչության տվյալների բանկերի մշակման և ծրագրավորման բաժնի ավագ մասնագետ Վ. Մաճկալյանը մասնակցել են ՄԱԿ-ի վիճակագրական բաժնի կողմից կազմակերպված «Պաշտոնական վիճակագրության համար Մեծ տվյալներ» 6-րդ միջազգային առցանց համաժողովին,
- ✓ 2020թ. օգոստոսի 4-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակ 6-ի տեղայնացումը Հայաստանում» ծրագրի աշխատանքային խմբերի քննարկմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 4-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Տվյալների ինտեգրման կարողությունների գնահատման հետազոտություն» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 5-ին Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են «Հայաստանում Կայուն զարգացման 2030թ. օրակարգի միգրացիոն նպատակների հասնելու գործում առաջընթացի մշտադիտարկում» նախագծի վերաբերյալ Skype-ով կայացած հարցազրույցին Owl.re-ի անկախ հետազոտական և գնահատման ընկերության փորձագետ Շարոն Մաքլենաղանի հետ,
- ✓ 2020թ. օգոստոսի 10-ից սեպտեմբերի 11-ը Արմատատի միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ Հ. Եղիազարյանը, որակի կառավարման բաժնի պետ Ռ. Շաբոյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի պետ Հ. Տիտիզյանը, միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի ավագ մասնագետ Հ. Սողոմոնյանը, բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդալյանը, վիճակագրական տեղեկատվության տարածման բաժնի ավագ մասնագետ Ն. Մարգարյանը, գների և միջազգային համադրումների բաժնի ավագ մասնագետ Զ. Ավետիսյանը, ֆինանսների վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ա. Օհանջանովը, սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի մասնագետ Հ. Սիմոնյանը և տնային տնտեսությունների

վիճակագրության բաժնի մասնագետներ Լ. Ավետիսյանը և Ս. Կարապետյանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Կայուն զարգացման նպատակի համար ազգային մեթատվյալների կազմում» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. օգոստոսի 12-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների բարելավում, կեղտաջրերի մաքրում, ջրերի երկրորդային օգտագործում» աշխատանքային առաջին խմբի հերթական քննարկմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 12-ին Արմատատի տեղեկատվական ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիաների վարչության պետ Ա. Մարտիրոսյանը մասնակցել է Էլեկտրոնային ուժեղացման կենտրոնի կողմից կազմակերպված «Աշխարհագրական տեղեկատվական համակարգ (GIS) և տվյալների վերլուծություն՝ օգտագործելով R (Մեծ տվյալների վերլուծություն)» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 14-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած «Ջրօգտագործման արդյունավետություն, ջրային սթրես, ՋևՋ, ոռոգման բնագավառում պետական ֆինանսավորման համամասնություն, ՏԻՄ-երի մասնակցություն ջրի կառավարմանը» աշխատանքային երրորդ խմբի հերթական քննարկմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 17-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ջարգացման ծրագրի կողմից «ԵՄ կլիմայի համար» ՄԱՁԾ-ԵՄ տարածաշրջանային ծրագրի ներքո կազմակերպված «Կլիմայի փոփոխությանն առնչվող բյուջետային ծախսերի նշագրում» խորագրով առցանց աշխատաժողովին,
- ✓ 2020թ. օգոստոսի 17-19-ը ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը, Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը, տնային տնտեսությունների վիճակագրության բաժնի պետ Լ. Մարկոսյանը, ավագ մասնագետ Ա. Բադայանը, նույն բաժնի մասնագետներ Լ. Ավետիսյանը և Ս. Կարապետյանը, որակի կառավարման բաժնի ավագ մասնագետ Ա. Ամիրխանյանը, աշխատանքի վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ջ. Ավոյանը, ՀՀ ՎԿ աշխատուժի հետազոտության ծրագրի ղեկավար

Լ. Մախսուդյանը, նույն ծրագրի բազայի մասնագետ-տեխնիկ Ս. Ջեյնայանը, աշխատուժի հետազոտության որակի վերահսկող Ն. Սաֆյանը և միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի մասնագետ Վ. Սողբայանը մասնակցել են Եվրոստատի կողմից կազմակերպված «Վիճակագրությունն արևելյան գործընկերության միջոցով» (STEP) ծրագրի կողմից կազմակերպված «Ժամանակի օգտագործման հետազոտության մեթոդաբանության ներածություն» խորագրով առցանց դասընթացին,

- ✓ 2020թ. օգոստոսի 18-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Մեծ տվյալներ – մեծ գործ. դասեր, քաղված Ինդոնեզիայի փորձից» խորագրով առցանց հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 19-ին Արմատատի սոցիալական ոլորտի վիճակագրության բաժնի մասնագետ Հ. Սիմոնյանը մասնակցել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության և ԴԻՎԻՎԻ ինտերնեյշնալի հայաստանյան գրասենյակի կողմից կազմակերպված «Մեծահասակների կրթության և ուսումնառության ազգային զեկույցին ընդառաջ» խորագրով առցանց աշխատաժողովին,
- ✓ 2020թ. օգոստոսի 20-ին Արմատատի մարդահամարի և ժողովրդագրության բաժնի պետ Կ. Կույումջյանը և նույն բաժնի ավագ մասնագետ Ա. Թոխայանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի վիճակագրական ինստիտուտի կողմից կազմակերպված «COVID-19 համավարակի հետևաքով մահացության չափման մարտահրավերները» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 20-ին Արմատատի աշխատանքի վիճակագրության բաժնի պետ Լ. Քալանթարյանը և Աշխատուժի ընտրանքային հետազոտության ծրագրավորող Ս. Արթեյանը մասնակցել են ՄԱԿ Կանայք-ի կողմից կազմակերպված «Ժամանակի օգտագործման չափում և քանակական խնամքի չափում. մարտահրավերներ և ռազմավարություններ ժամանակի օգտագործման հետազոտության նախագծման և ներդաշնակեցման գործում» խորագրով վեբինար հանդիպմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 25-ին ՀՀ ՎՊԻՍ անդամ Ա. Սաֆյանը՝ որպես աշխատանքային խմբի անդամ մասնակցել է ՄԱԿ-ի Եվրոպայի տնտեսական հանձնաժողովի «ԿՁՆ-ի վիճակագրություն» աշխատանքային խմբի Կառավարող Կոմիտեի վեբեքս հանդիպմանը,

- ✓ 2020թ. օգոստոսի 25-ին ՀՀ ՎՊԽ անդամ Ն. Բաղդասարյանը և Արմատատի բնապահպանության վիճակագրության բաժնի ավագ մասնագետ Ն. Մանդայանը մասնակցել են ք. Երևանում կայացած ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի կողմից կազմակերպված ԿԶՆ 6-ի տեղայնացումը Հայաստանում ծրագրի աշխատանքային խմբերի քննարկմանը,
- ✓ 2020թ. օգոստոսի 26-ին Արմատատի մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ Լ. Խաչատրյանը մասնակցել է ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված «Ազգային հաշիվների համակարգի թարմացում և հարակից միջազգային ստանդարտներ» խորագրով առցանց նիստին,
- ✓ 2020թ. օգոստոսի 26-28-ը Արմատատի նախագահ Ս. Մնացականյանը և ՀՀ ՎՊԽ անդամ Ա. Սաֆյանը մասնակցել են ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի կողմից կազմակերպված ՄԱԿ-ի Ասիայի և Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանի տնտեսական և սոցիալական հարցերի հանձնաժողովի Վիճակագրության Կոմիտեի 7-րդ առցանց նստաշրջանին: